սակարութիւնը: Նրանք բոլորն էլ շատ նման են միմեանց. բոլորն էլ աւազակներ են. զանազանութիւնը միայն գողութեան տեսակի մէջն է:

— Բայց գողը այնքան վնասակար չէ, երբ մէկի ոչխարը, միւսի աւանակը գողանում է. իմ ասածները այնպիսի գողեր են, որ նրանց վնասը հասնում է մեր ամբողջ ժողովրդին: Նրանք խիստ յարմար գործիքներ են մեր բռնակալների ձեռքում: Նրանք ճնշում են, ոչնչացնում են ամէն զօրութիւն, որ գործ է դրւում թշոառ ստրուկին հանգստութիւն պարգեւելու համար: Եւ այդ գողերը, այդ աւազակները, որպէս ասեցի, մեր հասարակութեան առաջնորդող անձինքն են…

— Թողնենք մանր քեռի պետրոսներին, անցնենք դէպի խոշորները: Սուլթանի դռան համարեա ամբողջ տնտեսական եւ գանձային կառավարութիւնը հայ սառաֆների ձեռքումն է: Նրանք կրում են աւելի բարձր տիտղոսներ, — կոչւում են ամիրաններ: Տեսէք ի՞նչ է ամիրայ սեղանաւորի (սառաֆի) պաշտօնը. կառավարութիւնը տալիս է գաւառների հարկահանութիւնը՝ միեւնոյն ժամանակ նրանց դատաւորութիւնը փաշաներին կապալով: Բայց նա փաշայի վրայ վստահութիւն չունի, թէ նա իր ժամանակին կներկայացնէ նշանակած տուրքը: Փաշան պէտք է մի երաշխաւոր տայ: Ամիրայ սեղանաւորը միշտ պատրաստ է այս երաշխաւորութիւնը իր վրայ ընդունելու, որովհետեւ նրա մէջ մեծ շահեր ունի, որովհետեւ փաշայի կապալառութեան վաստակի մի մասն էլ ինքն պիտի վայելէ: Բայց որտեղի՞ց է գոյեանում վաստակը: — Բիւրաւոր թշոառ հարստահարոածների քրտինքից: Փաշան սարսափելի անգթութիւններով հաւաքում է իրան յանձնոած վիճակից տէրութեան հարկը եւ ուղարկում է երաշխաւոր սեղանաւորին, իսկ սեղանաւորն իր կողմից պէտք է արծաթը ներկայացնէ տէրութեան գանձարանը: Բայց նա զուտ արծաթ չէ տալիս, այլ փողի փոխարէն ետ է դարձնում գանձարանին թղթեր (փուսուլաներ), որոնց ինքը նոյնպէս փողի տեղ ընդունել էր գանձարանից: Այսպիսով նա «սաղացնում էէ իր ձեռքի թղթերը:

— Բայց որտեղի՞ց ընկան նրա ձեռքը այդ թղթերը, — հարցրի ես, լաւ չհասկանալով Ասլանի վերջին խօսքերը:

— Սեղանաւոր ամիրան, — պատասխանեց նա, — զանազան առեւտրական յարաբերութիւններ ունի բարձրագոյն դռան հետ. կամ նա ընդունել է զօրքը կերակրելու եւ հագուստ մատակարարելու պարտաւորութիւնը եւ կամ նա իր ձեռքում ունի, օրինակ, յարեմի տնտեսութիւնը: Աշխարհի ամենապատոնական գոհարներով զարդարում է նա սուլթանի բազմաթիւ կնիկներին, եւ աշխարհի ամենաթանկագին փարչաները մատակարարում է